Պարույր Սևակ

Զարմանում եմ

Ես, ճիշտն ասած, զարմանում եմ շա՜տ բաներից,
Քիչ լավի հետ՝ ամեն տեսակ վա՜տ բաներից,
Բայց ուզում եմ միայն մեկով բավարարվել՝
Ա՛յն հոգնատանջ ճամփորդի պես այսօր վարվել,
Որ հոգնելով ճամփաներից՝
Զարդ ու փշուր կանգ է առնում
Եվ չի նայում առաջ, վար-վեր
Ու հայացքով ետ չի դառնում -
Հոգնածորեն նայում է նա աննպատակ
Եվ ա՛յն տեսնում, ինչ ընկած է ոտքերի տակ:
Ու ես հիմա,
Որ անհարմար
Վատ բաների թավ անտառում ճամփորդելուց
Զարդված-հոգնած՝
Հանգըստանում-թարմանում եմ,
Նրա պես էլ ակամայից ու ծուլորեն զարմանում եմ,
Որ - թռչնի պես - ճիշտ խոսքից է մարդը խրտնում,
Եվ ոչ երբեք սուտ խոստումի կրակոցից.
Լուսնի նման՝ արևից է նա սփրթնում
Եվ շիկնում է հրախաղի սառը բոցից...
Իսկ դուք՝ ինչպե՞ս:

Դո՞ւք էլ՝ ինձ պես:
Է՛հ, երևի, ինձ վրա եք դուք զարմանում...

20.XI.1957թ.
Մոսկվա